«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ավետիք Իսահակյանի կյանքի արտացոլումը նամակներում
ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու և գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Աննա Առաքելյան
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Լեռնանիստի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

1.Ներածություն……2

2. Ավետիք Իսահակյանի կյանքի արտացոլումը նամակներում……3

3.Եզրակացություն……17

4.Օգտագործված գրականություն……18

Ներածություն

Հայ մեծ դասականի ժառանգության մի գեղեցիկ մասը կազմող նամակները տարբեր տարիների հրապարակվել են զանազան պարբերականներում և նրա երկերի առանձին ժողովածուներում:

Սակայն միշտ էլ ուրույն հետաքրքրություն է ներկայացնում դրանց ամբողջական հրատարակությունը՝ հեղինակի և՛ անձնական կյանքի, հայացքների հետագիծը պարզելու, և՛ անգամ այս կամ այն երկի ստեղծագործական պատմությունը, մտահղացումների շարժառիթն իմանալու համար:

Հետազոտական աշխատանքի արդիականությունը.

Իսահակյանի նամակները բազմաբնույթ են և շատ կողմերով հարստացնում են մեր իմացությունը նրա մասին: Ինչպես նաև ունեն ոչ միայն գրական-գեղարվեստական, այլև պատմահասարակական արժեք, որովհետև այդ նամակներում արտահայտված են մեր ժողովրդի ճակատագրական փորձությունների առթիվ Իսահակյան խոհերն ու մտածումները:

Հետազոտական աշխատանքի խնդիրը.

- Ուսումնասիրել այն նամակները, որոնք բովանդակում են գրողի կյանքի իրողություններ, տրամադրություններ և որոշակի ազդեցություն ունենում նաև նրա պոեզիայի ճիշտ գնահատման գործում:

Հետազոտական աշխատանքի նպատակները.

- Բարձրացնել հետաքրքրությունը Ավ. Իսահակյանի սիրային քնարերգության նկատմամբ,
- Աջակցել սովորողին ճիշտ վերլուծել գրողի ստեղծագործությունները՝ կապել նրա անձնական կյանքին:
- Խթանել հասկանալ հեղինակի աշխարհընկալումը:

Ավետիք Իսահակյանի կյանքի արտացոլումը նամակներում

Ավ. Իսահակյանը հայտնի է ոչ միայն թողած հարուստ գրական ժառանգությամբ, այլև բազմաթիվ սիրային արկածներով: Վարպետի հմայքը ոչ մի կին չէր կարողանում մերժել: Կնամոլի նրա համբավը դուրս էր եկել նույնիսկ Անդրկովկասի սահմաններից: Սակայն Վարպետը կյանքում ունեցել է միայն մեկ մեծ, իսկական սեր, և այն էլ՝ դժբախտ:Կնոջ առեղծվածային էության բացահայտումը միշտ էլ զբաղեցրել է Իսահակյան տղամարդուն և արվեստագետին: Կարելի է ենթադրել, որ բազմահազար կանանց միջոցով Իսահակյանը փորձում էր բուժել խոցը, լրացնել սրտի այն բաց տարածքը, որն առաջացրել էր նրա հեռավոր ազգական Շուշիկը: Բանաստեղծի սերը, սակայն, ժամանակի հետ դարձավ շրջապատի բիրտ և նյութապաշտ մտայնության զոհը: Ինչպես չսպիացող վերք, գալարվող ցավ ու տառապանք այն վերապրել է ողջ կյանքում: Օրագրային առաջին իսկ գրառումից, անդրանիկ՝ < Երգեր ու վերքեր > ժողովածուից սկսած՝ Իսահակյանի սիրային պոեզիան ներկայանում է հոգևոր տարբեր ալեբախումներով, վերացատկում տարբեր հնչեցումներով՝ սիրո թրթիռ, տառապանք ու տանջանք, անկեղծ խոստովանանք, կարոտակեզ պոռթկում, ապա զգացմունքների հեղեղ՝ հոգի ծվատող անհույս մորմոք, կրակված սիրո բոց, հրդեհ, արնածոր սրտի վերք:



Բանաստեղծն աշխարհ է մտնում կյանքի անհուն սիրով, սիրո երջանկության, վայելքի անհագուրդ ծարավով: իսկ սիրո ուժի, մեծության մասին են վկայում նրա հիպերբոլիկ փոխաբերությունն ու պատկերները: Իսահակյանին լիովին համապատասխանում է Թումանյանի խոսքը Սայաթ-Նովայի մասին, թե նա <մի հոյակապ սիրահար է՝ բռնված ու բռնկված սիրո հրդեհով, նրա լույսի տակ էլ նկատում է աշխարհն ու իրերը>: Եվ իրոք, Իսահակյանի ստեղծագործության մեր սերը ջրի այն

կաթիլն է, որն արտացոլում է արևը՝ բանաստեղծի ողջ էությունը, նրա վերաբերմունքը կյանքի նկատմամբ: Իսահակյանը դեռևս դպրոցական տարիներից սիրահարված էր Շուշանիկ Մատակյանին: Բանաստեղծի մայրը և Շուշանիկի տատը եղել են մորաքրոջ աղջիկներ: Շուշանիկը նույնպես օժտված է եղել գրական ձիրքով, գրել է բանաստեղծություններ, հոդվածներ տպագրել կանանց հարցի մասին: <1891թ. հունիսի 17-ին Կոստանյանների տանը պատահեցա օրիորդ Շուշանին, ողջունեցի և նստեցա մոտը, նա ստեղծագործությամբ էր պարապում: Մեր քաղաքի բոլոր աղջիկներից ավելի սա է ինձ գրավում. Չափազանց գեղեցիկ է, սև, կլոր աչքեր, վառվռուն ու խելացի հայացք, վարդագույն շրթունք, դալկահար դեմք... Այո, սա մի հրեշտակ է, մի գերբնական ոգի, մի մագնիս, որ քաշում է դեպի իրեն իմ սիրտն ու իմ հոգին: Ես 16 էի, նա՝ 14: Ախ, Շուշիկի համար էի ապրում: իմ կյանքի ծանրության կետն էր, մրա շուրջ էր պտտվում իմ ողջ գոյությունն: Ախ, ինչքան սիրում էի և ինչքան մաքուր ու հրեշտակային>:

Ախ, իմ սիրտս, վախ իմ սիրտս
Օրուց-մանկուց հալավ-մաշավ...
Աշխարհ մտա, վարդ սիրեցի,
Անսեր վարդը սիրտս ծակեց:

1893թ., երբ Իսահակյանը գտնվում էր արտասահմանում, քույրը նամակով հայտնում է Շուշանիկի ամուսնության մասին և ավելացնում <Շուշանիկը քեզի հարցուց, թե Ավետիքը ինչդ է, որտեղ է: Ես էլ ասացի, թե Վիեննա է, հետո պետք է գնա Գերմանիա՝ կարդալու: Շատ ուրախացավ...>: 16-ամյա դեռատի աղջիկը՝ Շուշանիկը, ծնողների դրդմամբ ամուսնանում է Գերմանիայում ուսում ստացած և նոր վերադարձած Հովհաննես ՏերՄիրաքյանի հետ, որը նրանից 17 տարով մեծ էր: Նրանք թեև համերաշխ ընտանիք են կազմում, բայց աղջկա սրտում սերը անթեղված կրակի նման երբեմն բոցավառվում է: Իսահակյանը Շուշանիկի ամուսնության լուրը լսելիս գրում է.

Դարդս լացեք, սարի սմբուլ,
Ալվան-ալվան ծաղիկներ,
Դարդս լացեք, բաղի բլբուլ,

Ամպշող երկնուց զով հովեր...

<Ախ, Շուշիկ, մոռացար ինձ, սրբությունը: Ես կլուծեմ այդ վրեժը, և ես բոլորիդ՝ Կոստանյաններ ու Տեր-Միրաքյաններ, կապտակեմ, դուք փչացած գազաններ... Դա տակնուվրա արեց իմ հոգին: Գիշերը մինչև չորսը չեմ քնել, հետո քնեցի, որովհետև ուժասպառ եղա: Տանջվեցի, լացեցի, հուսահատվեցի ու գլուխս պատին խփեցի...վճռեցի. պիտի նամակ գրել Շուշիկի մարդկանց և ստիպել, որ ապահարզան տա, իսկ եթե չտվեց, ես էլ չեմ կարող տանել...այդ ժամանակ կդիմեմ խիստ միջոցների՝ արյուն...Ես ինձ կսպանեմ ու իմ արյունով կներկեմ նրա կյանքը...>:

Սիրեցի, յարս տարան, յարա տվին ու տարան,

-Էս ինչ զուլում աշխարհ է, սիրտս պոկեցին տարան...

Կյանքի ու տիեզերքի խենթ պտույտի մեջ լույս թևերով ճախրել է բանաստեղծի հոգին՝ երազելով քեզ՝ հավերժական կին, սակայն սիրուց փշրված նրա հոգին կորցրել էր երազի ու հավատի ճամփան, կնոջական քմայքները ու սեթևեթանքները չէին արբեցնում նրա հիվանդ հոգին, սիրուց փշրված պատանեկան հոգին աշխարհի գորշ ճամփեքին չէր հավատում սիրո ձայնին.

-Միամիտ չեմ՝ հավատամ քեզ, տառապանքս փորձ ունի,

Մի մրահոն կույս էր քեզ պես, կոտրեց սիրտս պատանի...

<Հազար երանի Շուշիկին սիրած չլինեի ու չսիրեի հիմա էլ: Նա իմ դժբախտության, իմ քայքայման ու վերջապես իմ մահվան պատճառը եղավ և լինելու է> :

Ապրած իմ կյանքից՝ մի սուրբ երազի

Բուրմունքը մնաց սրտումս անմոռաց:

Այն, որ ջերմ լացի՝ առանց տանջանքի,

Խորունկ սիրեցի՝ առանց տենչանքի:

<Երբ սիրում էի Շուշիկին, ուրիշ տեսակ մարդ էի, երկրային չէի: Ես սիրում էի շատ խորը և հաստատ, իմ էությունը նրան էր պատկանում: Նրա գոյությամբ էր իմ կյանքը պայմանավորվում և համարյա պայմանավորվում է: Ես չէի ձգտում նրան համբուրել, այդ միտքն ինձ վիրավորում էր, որովհետև ես սիրում էի նրան, ինչպես իմ մայրիկին, ինչպես գեղեցկությունը, ինչպես հայրենիքիս կապույտ լեռները: Իմ ողջ էությունը երգի ու երազի թևերով հյուսեցի նրա սիրեկի էության հետ>:

Թռած սիրո զառ թևերով՝ ես քեզ տեսա աստղերի մեջ,

Աչքերդ լի արևներով, դեմքդ՝ շողշող լույսով անշեջ:

Սիրտս դողաց, սիրտս մարավ ձայնիդ քաղցրօրոր հովերեն,

Իմ ողջ կյանքը երազ դառավ մազերիդ ծուփ-ծուփ ծովերեն:

Հոգեկան երկվությունը ծանր է ու ճնշող, մի կողմից մաքրամաքուր սեր՝ տրորված ու արհամարված սիրելիից, մյուս կողմից վիրավորված ու անարգված ինքնասիրություն, սրբապղծված մաքրություն, խաբված երազ, ցնորված պատրանք... Որքան ուժ է պետք՝ լռեցնելու հոգու ճիչը, սիրո պոռթկումը, երկար սպասված վայրկյանի զգացողությունը, սիրելիին փարվելու անհագ ցանկությունը...

Բանաստեղծի հոգին ցավի ու անհագ վայելումի բախման մրրկածուփ ալիքներում է լողում, որ հոգին այնքան անզոր է սիրո մրրիկը լցնելու համար:

<Ես սիրում եմ ուրախություն, ատում եմ զվարճություն: Դատարկ սրտում կապրեն միայն օձեր, ինչպես դատարկ ծակերում՝ խլուրդներ ու օձեր: Պետք է աշխարհում մի բան սիրել անքնին ու կույր սիրով... Ես, ինչպես մի մրրիկ՝ լի կյանքով ու վշտով, եկա Շուշիկի մոտ, նա ապառաժ էր, ժայռ էր, բախեցի նրա կրծքին , վազեցի և շառաչեցի մոտը, նա մնաց չոր, ամուր ու ժայռ քար... իսկ երբ հեռացա, միայն մի քանի կաթ արցունք՝ իմ սրտի խորքերից քամած, ընկած տեսա նրա քար կրծքի վրա>:

Ես աշխարհի մեջ երազ եմ սիրել,

Քո Շուշան հոգին, քո հոգին քնքուշ,

Ես չեմ տենչացել երբեք քեզ տիրել

- Քո Շուշան հոգին, քո քնքուշ հոգին:

<Կյանքը հոսեց, սրտիս վերքերը լավացան, սպիները կորան, այնպես, որ իսկի չեմ հիշում, որ ես մի ժամանակ մի մարդ էի՝ փշրված ու անձգտում, կամ իսկի չեմ հիշում, որ ես սիրեցի, լացեցի ու տանջվեցի... Բայց նրանք իրենց դերը կատարեցին. Իմ այժմյա էությունը դիրեկտ հետևանք է ապրած անցյալիս...>:

Օխտը սարով հեռու քեզնից, քու շվաքով ապրում եմ, յար,

Օխտը տարով բաժան քեզնից, քու կարոտով էրվում եմ, յար.

Դարդիս դարման, յարիս մահլամ, կյանք ու արև յարս ուր է...

Իսահակյանի համար սերը կյանք է՝ իր բովանդակ գեղեցկությամբ, իր բոլոր հմայքներով ու հրապույրներով, սերն է բնության ու կյանքի արագիլը: Ահա թե ինչու սիրո խորտակումը նրա համար հավասարազոր է դառնում տիեզերական վթարի: Բնությունը կորցնում է իր հրապույրը, և կյանքը՝ իր իմաստը.

Վառ աստղերը երկնից ընկան, վարդ ու շուշան թառամեց,

Ախ, իմ կյանքը, անուշ կյանքս կտոր-կտոր փշրվեց...

Անգին յարիս լույս երեսին կարոտ եմ,

Նազուկ մեջքին, ծով-մազերին կարոտ եմ,

Քաղցր լեզվին, անուշ խոսքին կարոտ եմ,

Սև աչքերով էն եղնիկին Բինգյոլի:

Բանաստեղծի հոգու ցավը կարող էր մեղմել աստվածային սարսուռով համակված վայրկյանը սիրելիի գրկում. <Մի վայրկյանը սոսկ՝ խրթին ու անհուն, ժամանակս անցած կդարձնի ինձ հետ>: Սակայն բարդ է մարդկային հոգին, առավել քան արժանապատվությունը ու ինքնասիրությունը տրորված տղամարդու հոգին:

Ամուսնական առագաստում երջանկություն չգտնելով՝ երեք երեխաների մայր Շուշանիկը վերադառնում է Իսահակյանի մոտ՝ նրանից չմարած սիրո քնքշանք գտնելով: <...Մի օր Շուշանիկ ինձ ասաց.< Ես պատրաստ եմ քեզ բժշկելու համար ամեն միջոց, ինչ-որ կախված է ինձնից, գործի դնել քեզ համար>: Բայց ես այլևս չեմ ուզում..

...Շուշիկը դաշույն գցեց սրտիս մեջ և մնում է այդ դաշույնը: Անհուն, անվերջ տանջվեցի և հիմա հոգնած եմ, քարացած... Երիտասարդ կյանքս, գարունս դժոխքի,

տառապանքի մեջ անցավ. Մեռած եմ, ոչ թաղած. Դիակ-դիակ ման եմ գալիս, ոչ մի անգամ սրտանց չուրախացա...>>:

Տարիներ հետո քեզ տեսա նորից,

Սիրտս արտասվեց, բայց ժպտացի ես,

Նույն աղջիկն էիր՝ չքնաղ բոլորից,

Հոգուս մտերիմ, հարազատ այնպես:

Աչքերդ մեղմով հանգչեցին վերաս,

Ես հպարտ ու վես անցա քո մոտով,

Շուրջս ծածանվեց լուսեղեն երազ, և ետ նայեցի անզուսպ կարոտով:

<1928թ., երբ հայրենիքում էի, Շուշիկը հրավիրեց թեյի: Նստեցինք կողք կողքի, կարծես ոչինչ չի պատահել: Թեյասեղանի շուրջ նրա երկու դուստրերն էին, քույրն ու քրոջ աղջիկը՝ իբրև անցյալին անգիտակ: Շուշիկն ասաց.< Ավետիք, հիշում ես Ղփչաղի այն կարմիր ծաղիկը, բաց, նուրբ, կարմիր, բայց մեղմ կտրված թերթերով, ինչ էր նրա անունը, ուրիշ տեղ չեմ գտել, չեմ տեսել նմանը>: Ես չհիշեցի:

-Այն ծաղիկը, որ դու քաղեցիր բարձր ժայռի կրծքից: Ես հիշեցի, բայց ասացի, որ բնավ չեմ հիշում, բոլորովին մոռացել եմ, մտքումս ասացի, որ այդ մեր սիրո, մեր երջանկության ծաղիկն է, որ թոռոմեց ու մեռավ անդարձ>>:

Տասներեք տառապանքով ու չմարող ցավով լեցուն տարիներ, անհագ որոնումի ու անդարձ կարոտի դառն զգացողության տարիներ, հույսերի ու հույզերի, կարոտի ու սպասման անգութ տարիներ...և տարիների հեռավորությունից այնքան երազի թևերից կանչող տեսիլքը...

<Բայց լալիս եմ հիմա, սրտիցս արյուն է կաթում. Գնա, Շուշիկ, Աստված քեզ հետ, ապրիր քո երեխաների համար, ինձ մի անիծիր, իմ անունս երբեք մի հիշիր և ոչ մի տեղ, ոչ մի մարդու մոտ, ինձ թաղիր քեզ համար հավիտյան, ինձ երբեք մի նայիր: Հոգիս խորշում է, երբ մտածում եմ, որ երբեմն դու կմտաբերես ինձ. Պետք չէ հիշել այն տաճարում մի ուրիշ Աստծո անուն, որին այդ տաճարը չի հնազանդվում: Քո հոգու տաճարից թող ես լինեմ դուրս՝ ես օտար, չճանաչված եմ այդտեղ...>:

1944թ., երբ Իսահակյանը լսում է, որ Շուշանիկը մահամերձ վիճակում է, գնում է Գյումրի և տեսակցություն ունենում նրա հետ: Երկու ժամ տևած առանձնազրույցից հետո Իսահակյանը Շուշանիկի մոտից դուրս է գալիս խոնավացած աչքերով: Մի քանի օր հետո Շուշանիկը մահանում է: Մեծ բանաստեղծը ինչ-ինչ պատճառներով չի կարողանում հոըղարկավորությանը ներկա լինել: Ասում են կինը՝ տիկին Սոֆին է արգելել: Բայց մեկ ամիս անց Իսահակյանը գնում է Գյումրի և թարմ ծաղիկներ դնում Շուշանիկի գերեզմանին: <Աղաչում եմ քեզ... ես էլ կվարվեմ քեզ հետ այդպես: Դու ինձ համար մեռար: Արտասվելով համբուրում եմ քո գերեզմանը և ճամփա ընկնում՝ նոր Աստված գտնելու>:

Կուզենայի, որբ կրկին գամ հոգնաբեկ ուխտավոր
Նվիրական քո շեքին, տեսնել այնպես նորից քեզ,
Ինչպես տեսա, սիրեցի, սիրեցի քեզ սրտակեզ:

Մինչև կյանքի վերջը Իսահակյանը իր բաճկոնի ծոցագրպանում պահում էր մի լուսանկար՝ Շուշանիկն իր քրոջ՝ Աննայի հետ: Բանն այն է, որ Իսահակյանը սիրել է և սիրային նամակներ է գրել նաև Շուշանիկի քրոջը՝ Աննային՝ նրա մեջ տեսնելով իր նախկին սիրած էակին: Եվ այս անգամ էլի խանգարում է աղջկա մայրը՝ Թագուհին:

Իսահակյանին թվում էր՝ Շուշանին մոռացել է, ժամանակը մեղմել է ցաված սիրո մորմոքը, սակայն ենթագիտակցության դաշտում ապրող այդ հույզերը նորից ղեկավարում են նրա էությունը: Նա տեսլացած տեսնում է սիրելիին իրականության մեջ. Հույզերի պոռթկման եզերքը, ըստ նրա, նույնն է: Այնինչ նրա առջև ուրիշ կին էր, ուրիշ աշխարհ: Աննայի՝ մի կողմից հոգեկան երկբայությունը, մյուս կողմից հարազատների հորդորները

անջրպետ են ստեղծում նրա և Իսահակյանի միջև: Կրկին բանաստեղծի հոգին ապրում է այն, ինչը զգացել էր տարիներ առաջ՝ Շուշանիկի մերժումի ժամանակ: Նույն ցասումը, նույն բողոքը Մատակյաններին, աշխարհին: Աննային ուղղված խոսքերը, թվում է, Շուշանի անգութ սիրտն են մերկացնում. <Անիծում եմ ինձ, որ նորից ձեր դուռը եկա և արյունվելով ետ եմ դառնում...>:

Կնոջն ուզեցի հավատալ նորից,
Լալ ու երազել առաջվա նման,
Բայց արյունոտվեց խեղճ սիրտս նորից,
Եվ որբ մնացի և թափառական:
Սեր, մնաս բարով, էլ քեզ չեմ նայի,
Չեմ բախի դուռդ ունայն քամու պես,
Բայց կուզենայի հավիտյան լայի,
Եվ չցամաքեր արցունքը սրտիս:

<Թանկագին Աննիկ, ես չեմ ուզում ասել այն, ինչ որ գուցե դու չգիտես կամ շատ քիչ գիտես,- դա այն է, որ ձերոնք ինձ չեն սիրում նրա համար, որ ես աստվածային, տիեզերական սիրով սիրել եմ, պաշտել եմ ձերոնցից մեկին, որի համար այնքան եմ տանջվել ու լացել, որ դեռ արցունքս չի չորացել սրտիս մեջ, և տանջանքից աչքերս չեն փայլել երիտասարդական կրակով, ես այնքան եմ տանջվել, որ ուրիշը իմ փոխարեն ինքնասպան կլիներ... ես չմեռա ֆիզիկապես, բայց կորցրի շատ չքնաղ բաներ՝ աշխույժս, ժամանակս, բանաստեղծական տաղանդս: Հավատա դու ինձ, և եթե ես դիվական չարությամբ քեզ կործանեմ, զոհվիր, մի հավատա՝ հավատալով, որ ես քեզ միայն բարին, միայն գեղեցիկը, միայն լուսավորը կբերեմ: Թող աշխարհը չարախոսե իմ դեմ, քարկոծե ինձ, դու հավատա ինձ և մեռիր իմ հոգու թևերի վրա..>:

Աննայի փխրուն, եթերային հոգին այն եզերքն է, որտեղ բանաստեղծը կարող էր մեղմել հոգու ցավը. <Ես քեզ երեխա էի կարծում, բայց հիմա զգում եմ, որ դու խորը ու երազուն մարդ ես, որ դու աշխարհից չես, որ քո աչքերի մեջ երկնքից լույս կա, որ ճառագայթ ես...>:

Քույր իմ, նազելի, նայիր քո դիմաց՝

Վիրավոր, ավեր սիրտս եմ բացել,

Ախ, նվիրական ինձ քո գիրկը բաց,

Եվ գուրգուրիր ինձ, ես շատ եմ լացել:

Աննիկին

Մարդկանց արցունքները թափվում են անվերջ,

Եվ անապատում, թե ծովերի մեջ,

Եվ ժպիտների, համբույրների տակ,

Եվ դարպասներում, թե խրճիթներում:

Թափվում են լռիկ, անձայն, անհատնում,

Եվ այդ ամենը կաթիլ առ կաթիլ

Ամեն կողմերից հավաքվում, գալիս

Թափվում են անվերջ մռայլ սրտիս մեջ:

<Եվ դու այնքան հպարտ ես, որ մի օրից մի օր վստահորեն և վճռականորեն չասացիր ինձ, որ քեզ ինչ էլ որ լինի՝ թեկուզ աշխարհ քանդվի՝ սիրում եմ և սիրում, և այդ սիրո համար զոհ կբերեմ և երրորդություն, և քույրեր, և նույնիսկ մայր... Բայց չէ որ ես քեզ այդպես եմ սիրում՝ պատրաստակամ՝ զոհաբերելու ամեն ինչ և կյանքս նույնիսկ... Բայց դու կարող ես այդպես վարվել, նույն տեսակ պատասխանել իմ սիրուն: Դու լավ գիտցիր, որ սիրո գինը ուրիշ ոչինչ է, ոչ հարստություն, ոչ համբավ, ոչ ընտանիք ու ծնողներ, այլ միայն սեր.- սիրո գինը սերն է. Սիրով միայն սեր կառնեն... >:

Բայց համբույրներն այն սրտադող,

Որ ինձ տվիր ու առար,

Բնավ երբեք դու չես կարող

Ոչ սռանալ, որ ետ տալ:

Նրանք պիտի վառվեն անշեջ,

Պիտի կիզեն քո հոգին,

Ինչպես որ միշտ այրում են ինձ երջանկությամբ ցավագին:

<Ամենասիրելի Աննիկ ջան, իմ անգին, իմ պայծառ, իմ ընկեր, իմ մաքուր սեր, ասա, ինչ որ կուզես՝ ես կատարեմ քեզ համար, ամենադժվարին բաները, անկարելի բաները,

մեռնել քո երազների համար: Դու իմ շքեղ, դու իմ զուլալ երազ... Եղիր միշտ այդպես լավ, այդպես մաքուր, այդպեսնկուսական, թող ոչ ոքի շունչը չդիպչի քեզ, ոչ ոքի ձեռքը չհասնի քեզ- դու երկինք եղիր իմ հոգու համար՝ ձգտեմ, թռնեմ քեզ և մեռնեմ քո կապույտ, քո լազուր, քո ջինջ հոգում: Սիրիր ինձ՝ քու անձնվեր Ավետիքին>:

Էդ համբույրը, որ ինձ տվիր,

Էնպես անուշ-մեղուշ էր,

Էդպես պտուղ ծառ ու ծաղիկ, ծով ու ցամաք չի ծլել:

Էդ համբույրը, որ ինձ տվիր, տանեմ աշխարհս ման տամ,

Ինչքան դառը սրտեր տեսնեմ, տամ հոտ առնին, անուշնան:

<...Բացի ինձ տանջելուց ուրիշ ոչինչ չես անում... դու բոլորը համարում ես եղած-չեղած, և լսում ես ձեր շրջանին: Եվ եթե դու լսում ես նրանց, արհամարհում եմ և քեզ. Գնա, հեռացիր ինձնից, քեզ համար այլևս Ավետիք չկա... Դու արժանի չես նրա սուրբ հոգում ապրելու, քու տեղը մի վաճառականի կամ մի ինժեների զզվելի գիրկն է... անցավ ոսկի արևը, եկավ գիշերը, և չկա երազդ, չկա Ավետիքը. Նա բանաստեղծ է, ահա նա փշրեց իր կուրծքը, խրեց մատները, հանեց քո սերը իր սրտի միջից և շպրտեց շան ու գելի առաջ, ահա նա ազատ է հիմա, ինչպես ալիքը ծովում, բարձր է նա, ինչպես Հիմալայի լեռնագագաթը. Նրա ճանապարհը սխալմամբ եկավ քեզ մոտ, նա սխալմամբ բախեց քո դուռը, շատ լացեց ու տառապեց, բայց չմեռավ... Դու մեռար նրա համար, արդյոք ինչպես պիտի հարություն առնես, արդյոք կարող ես հարություն առնել, արդյոք ուզում է նա, որ հարություն առնես...>:

Ամպն է կախել շուրթը տրտում, ինչ խավար է էն գիշեր,

Մեկը կուչ-կուչ իմ խեղճ սրտում արուն կուլա էս գիշեր:

Անգութ վարդը ծոցն է գոցել, փուշն է բացել էս գիշեր,

Խեղճ բլբուլի սիրտն է խոցել, արուն կուլա էս գիշեր:

1900-1901թթ. Իսահակյանը հրապուրվում է Ջավահիր Ներսիսյանով: Նրան այդ պահին հարկավոր էր մեկը, որ իր սիրտը բացեր և սիրո տանջող ցավից ազատեր: Ջավահիրը պատրաստ էր նրա սիրուն արձագանքելուն, բայց Իսահակյանը խնդրեց օրիորդին, որ հեռանա իրենից, քանի դեռ չի հատել անազնվության սահմանը: Հինգ տարի

անց Իսահակյանի կյանքում հայտնվում են երկու կանայք՝ Սոֆյա Քոչարյանը և Վիկտորյա Աբովյանը: Մեկն ամեն գնով ուզում էր ամուսնանալ նրա հետ, ընտաիք կազմեկ: Մյուսն այդ հարաբերությունները չէր կարող ունենալ, քանի որ ամուսնացած էր, ուներ ընտանիք, թեև հարաբերությունները ամուսնու հետ լարված էին: Նա ուզում էր սիրել այդ մարդուն իր ազատության մեջ: Բայց ավելի ճարպիկ գտնվեց Սոֆյան, որի հայրը իր գրավով Իսահակյանին ազատել էր բանտից: Իսահակյանը պարտքի զգացումից թելադրված ամուսնացավ Սոֆյա Քոչարյանի հետ և նրանից ունեցավ Վիգեն որդուն,որը հետագայում դարձավ կինոռեժիսոր: Իսահակյանը թեև ամուսնացել էր Սոֆյայի հետ, բայց նամակագրություն էր պահպանում Վիկտորյայի հետ{դերասանուհի էր, մանկավարժ, թարգմանչուհի և Խ. Աբովյանի թոռնուհին}. < սրտի ցավով զգում եմ, որ

հեռացանք իրարից, և տեսնում եմ, որ այդ զգացմունքը կրծում է ինձ,

թերևս՝ կոտրում, և ամեն անգամ ինձ ու ինձ երգում եմ.

Ծիրանի ծառ եղնեի, ճամփիդ բուսնեի,

Էնքան չմեռնեի, մեկ էլ տեսնեի...

...Ախ, եթե այնքան, որքան ես քեզ եմ կարոտում, նույնքան էլ դու ինձ

կարոտեիր... >: Եվ այդպես նամակագրությունը շարունակվում է մինչև 1910-1914թթ.: Իսահակյանը արտասահմանից նամակներ է գրում նաև կնոջը՝ Սոֆյա Քոչարյանին, որոնք անհույզ, չոր և կարճ նամակներ էին. < Ես ողջ և

առողջ եմ: Եթե խանգարիչ հանգամանքներ չծագեն, շաբաթ օրը՝ ամսի

28-ին, կդառնամ դեպի տուն: Խոստացել են ավտո տալ: Մնացածի մասին

ընկեր Դաշտենցը կպատմե >: Սոֆյան ամբողջ կյանքում խանդել է ամուսնուն, աշխատել է նրան հեռու պահել կանանցից, բայց աշխարհի բոլոր կանանցից ամենից շատ ատել է Շուշանիկ Մատակյանին: Իսահակյանի պատանեկության սիրո հերոսուհին եղել է Ղազարապատ գյուղից՝ Ավետիքի ամենասիրելի խաղընկերուհին:

Հազիվ 14-15 տարեկան էր Ավետիքը, երբ նրա մեջ զարթնում է սիրո առաջին զգացմունքը Զարոյի նկատմամբ: Պատահակն չէ, որ < Ալագյազի մանիներ > պոեմը նախնական տարբերակում վերնագրված էր < Զարո >, ապա՝ < Սիրուս գարունը >: Զարոն էլ իր հերթին քնքուշ ու նվիրական զգացումով էր կապված իրենից մի փոքր ավագ ապագա

բանաստեղծի հետ: Եվ հենց Ավոյի ու Զարոյի սիրավեպն էլ պոեմի հիմքն է: Ցավոք, երկու պատանիների գարնան առաջին ծաղկի՝ ձնծաղիկի նման քնքուշ ու անապական սերը, այդ ծաղկի նման էլ վաղանցուկ, թախծոտ ավարտ ունեցավ: Զարոյի ծնողները, որ բազմազավակ, չքավոր ընտանիքի տեր էին, ցանկացան դեռատի, աչքի ընկնող իրենց գեղեցկուհի աղջկա շնորհիվ փոքր-ինչ կարգավորել իրենց ընտանիքի ապրելակերպը և չմերժեցին հարևան գյուղից հարսնախոսության եկած ունևոր, սակայն բավականին տարիքով փեսացուին: Զարոն Իսահակյանի պոեզիայի գուցե թե ամենականացի և թախծոտ հերոսուհին է՝ անարատ, մաքրամաքուր էությամբ, զուլալ անմիջականությամբ և անթերի գեղեցկությամբ.

Շող-շաղափին եկա, կանգնա իմ Զարոյի դռան դեմ,
Դուռն էլ գոցած, ու ձեն տվի, ձենիս վրա չառա ձեն:
Ասեք Զարոյիս՝ դուռը բանա, սիրտս ընկավ ցավ ու ցեց,
Գիշերս գեշ երազ տեսա, տեսա սերս սուգի մեջ:

Իսահակյանի նամակները խոստովանություններ են: Տառապող ու սիրող մեծ հոգու խոստովանություններ: Մեր աչքի առաջ հառնում է թափառական ու անհանգիստ խառնվածքի բանաստեղծը, հայդուկ-մարտիկը, ազգային-հասարակական գործիչը, քնքույշ սիրահարը, հոգատար ամուսինն ու հայրը, ցավող ընկերն ու բարեկամը: Հաճախ Իսահակյանի կենսագրությանը հենց այնպես, թեթև հետևողներն անխռով ու հանգիստ վայելքներ, արտասահմանյան ճամփորդությունների հովվերգական բերկրություն են տեսել: Հայրենիքի ցավ ու հոգսերից հեռու, ժողովրդի անլուր ողբերգությանն անհաղորդ պանդուխտի ներքին հածումներ միայն: Նամակները պարզում են հակառակը. նույնիսկ չքնաղ Վենետիկն ու շռայլ Փարիզը, Շվեյցարիան՝ իր շքեղ բնությամբ, ոչ մի վայրկյան չեն ցրել պոետի ճակատի ամպերը, չեն կարողացել դեն վանել նրա հոգու մռայլը: Ազգային անլուծելի խնդիրները, հարազատ ժողովրդի ճակատագիրը, սոցիալական անապահով վիճակը, աստանդական կյանքը, անձնական մեծ ու փոքր շատ հանգույցներ երբեք հանգիստ չեն տվել նրան: Նամակներում ցավով ու կսկծանքով գրված տասնյակ ու տասնյակ էջեր դրա հաստատումն են: 900-ական ու 10-ական թվականների նամակներում հետաքրքիր բազմաթիվ էջեր հավաստում են նրա ակտիվ գործունեությունը, բուռն

մասնակցությունն ազգային-քաղաքական շարժումներին: Դեռ ավելին՝ երևում է, որ Դաշնակցական կուսակցության աշխատանքներին եռանդագին է մասնակցել, լուրջ շփումներ ու կապեր է ունեցել նրա առաջնորդների հետ, ըստ էության՝ եղել է հայ ազգային-ազատագրական պայքարի ներշնչողներից ու ռահվիրաներից մեկը՝ երկու դարերի սահմանագծում: Շատ էական է ընդգծել, որ իր կռահումներում, զանազան տարիների ու զանազան առիթներով հայտնած տեսակետների մեջ մեր ականավոր քնարերգուն հիմնակա նում իրավացի էր, ճիշտ էր կողմնորոշվում քաղաքական ու ազգային բարդ իրադրություններում: Ճիշտ է, Իսահակյանի կարծիքները երբեք կանոնիկ ու քարացած չեն եղել, ժամանակի հետ, հասարակական-քաղաքական ու ազգային պայմանների հանգույն՝ որոշ զարգացում են ապրել, կրել են ինչ-ինչ փոփոխություններ: Սակայն գլխավոր հարցերում, սկզբունքային դիրքորոշումների մեջ նա կայուն համոզմունքների էր դավանում: Իսկ դա լավագույն ձևով խտացված է նամակներում:

Նամակները, օրագրերը, հիշատակարաններն՝ ընդհանրապես, և, մասնավորապես, Իսահակյանի այդ ժանրի ստեղծագործությունները լավագույնս բացահայտում են դրանց հեղինակի խոհերն ու մտորումները, գրականքաղաքական, հասարակական հայացքները և, վերջապես, հեղինակի սրտի ու մտքի ողջ պատմությունը: «Իմ նամակները,- գրել է մի առիթով Թումանյանը, իմ գրելու ռոպեի տրամադրության նկարագիրն են. ես չեմ կարող կեղծ նամակ գրել, պահել, ծածկել հուզմունքներս, երբ որ մի սիրտ կա, որը ընդունակ է նրանց մեղմացնելու» : Ավ. Իսահակյանի նամակները ևս, իրենց մեծագույն մասով, հասցեագրված են սրտամոտ, սրտացավ մարդկանց, որոնց առաջ նա ևս բաց է արել իր հոգու դարպասները, պատմել ու խոստովանել իր սրտի ու մտքի գաղտնիքները՝ բաժանորդ դարձնելով իր վշտերին, խնդությանն ու տառապանքներին: Թումանյանի նման՝ Իսահակյանն էլ մի առիթով ասել է. «Ես մտածելով չեմ գրել նամակներս, այլ գրիչս գնում է անզուսպ, չափած-ձևված բաներ գրելու սովորություն չունիմ» , մանավանդ, երբ այդ նամակները պոետի քնարի լարերին ուժ տվող Շուշաններին են եղել հասցեագրված: Տվյալ նամակների զգալի մասը, դարձյալ Թումանյանի խոսքով ասած, «կենսագրություն ունեն իրենց ետևը»: Այդպիսի նամակների տողերում է, որ թաքնված է բանաստեղծի սիրտն ու հոգին: Եվ, իրոք, դրանք մեծապես օգնում են բացահայտելու բանաստեղծի

ներաշխարհը փոթորկող պատճառները: Մեծ և հարուստ կյանքով ապրած Իսահակյանի նամակները ճանաչողական նշանակալի արժեքներ են նրա բազմաբովանդակ կյանքի ու գործունեության տարեգրությունն ուսումնասիրողների համար:

Իսահակյանի նամակներն ընթերցողին տանում են բանաստեղծի զգացմունքների աշխարհը, մի աշխարհ, որն աղբյուրն է ստեղծագործության՝ ընդհանրապես, և, մասնավորապես, Իսահակյանի քնարի զորեղ լարը հանդիսացող սիրերգերի: Իսահակյանի այդ նամակները լավագույնս բացահայտում են պոետի սիրո երազների լիրիկական հերոսի՝ «տանջված սրտի», «երգ ու վերքի» պատճառը: Բանաստեղծի այդ նամակները դրամատիկ ապրումներով առլեցուն գործեր են՝ որպես և՛ Իսահակյանի «Դարդս լացեք», «Սիրեցի, յարս տարան», և՛ շատ ուրիշ բանաստեղծություններ: Նամակներում պոետն ազատ ու անկաշկանդ արտահայտել է սիրո սրով խոցված իր վիրավոր սրտի «երգն ու վերքը»:

Եզրակացություն

Աշխատանքի նպատակն էր քննության առնել Իսահակյանի նամականին, մասնավորապես այն նամակները, որոնք առնչվում են գրողի կյանքին և ունեն սիրային բովանդակություն, ճիշտ վերլուծել գրողի ստեղծագործությունները, կապել նրա անձնական կյանքին:

Իսահակյանի կյանքի բազմաթիվ իրողություններ արտացոլվել են նրա նամակներում: Նամակներից շատերը բացահայտում են Իսահակյան բանաստեղծի կերպարը, տրամադրությունները, կյանքի բազմաթիվ իրողություններ: Նշված հանգամանքը հաշվի առնելով՝ քննության եմ առել Իսահակյանի կյանքի արտացոլումը նրա նամակներում: Այդ նպատակով առաջադրել եմ խնդիր՝ ուսումնասիրել այն նամակները, որոնք բովանդակում են գրողի կյանքի իրողություններ, տրամադրություններ և որոշակի ազդեցություն ունենում նաև նրա պոեզիայի ճիշտ գնահատման գործում:

Իսահակյանի կյանքի մայրամուտն անցավ հարազատ ժողովրդի կողքին այնպես, ինչպես ինքն էր երազել: Ժողովուրդը ուժ էր տալիս նրան, ապրելու ավյուն և եռանդ: Ինքն էլ իր հերթին ժողովրդի հոգևոր սնունդն էր՝ իր բարությամբ ու մաքրությամբ, իր հայրենասիրությամբ ու հայրենապաշտությամբ, իր վեհությամբ ու իմաստությամբ; Քանի սերունդ հայ գրողների համար նա ճշմարտության փարոս է եղել, դաստիարակել է նրանց հայրենասիրության, ժողովրդասիրության ոգով: Հայության բոլոր վշտերն ու երազանքները խտացված էին նրա մեջ: Կան բանաստեղծներ, որոնց երգած սերը վարակիչ է, ապրած կյանքն ու անցած ճանապարհը՝ ուսուցանող, որոնց թախիծը իսկապես լուսավոր է, իսկ տրամադրությունը՝ ցավեցնող: Այդպես է հայ գրականության Վարպետը՝ Իսահակյանը: Զարմանալիորեն պարզ ու հասկանալի թվացող երևույթները անհուն խորություն, գույն ու բույր են ստացել նրա գրչի շնորհիվ: Նրա գործերի մասին խոսել կարելի է երկար, բայց միշտ մնում են չասված ու չնկատված մոտիվներ, որոնք քեզ մեկ անգամ ևս վերադառնալու արահետ են թողնում, արահետ, որը միշտ սիրված ու սպասված է:

Գրականության ցանկ

1. Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, Երևան 1973թ.
2. Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, Երևան 1979թ.
3. Ավ. Իսահակյան, Երկեր, Երևան 1987թ.
4. Ավ. Իսահակյան, Հիշատակարան, Երևան 1977թ.
5. Գայանե Մկրտչյան, 20_րդ դարի հայ գրողներ, Երևան 2014թ.
6. Ավետիք Իսահակյանի նամակները , Արփիկ Ավետիսյան, ԵՊՀ հրատ., 2016